

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/3

11 սեպտեմբերի 2012թ.

Քննարկվեց «ՍԱՀ» ՍՊԸ 28.08.2012թ. առարկությունները «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 20.07.2012թ. թիվ 1103119 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 14.06.2012թ. թիվ 1103119 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «ՍԱՀ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որն ընդգրկել է 15.12.2011թ-ից մինչև 10.07.2012թ. ընկած ժամանակաշրջանը: Ստուգման արդյունքում 20.07.2012թ-ին կազմվել է թիվ 1103119 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 60.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ համադրելով ընկերության փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված անձանց և առկա աշխատանքային պայմանագրերը, տնօրենի կողմից տրված գրավոր հայտարարությունը ստուգվող ժամանակաշրջանի աշխատանքային պայմանագրերի հետ, պարզվեց, որ փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված մեկ աշխատակցի՝ հաշվապահ Արմեն Մանոյանի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէր, մասնավորապես՝ բացակայում էր գրավոր աշխատանքային պայմանագրի կողմերի ստորագրությունը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանը:

Խախտվել է ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ հոդվածի և 85-րդ հոդվածի պահանջները, որի համար հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները լրացուցիչ գանձման է առաջադրվել 60.000 դրամ սոցիալական վճար:

«ՍԱՀ» ՍՊԸ հաշվապահի առարկություններում մասնավորապես նշված է.

«ՍԱՀ» ընկերությունում աշխատում են որպես հաշվապահ 2004թ-ի դեկտեմբերի 1-ից: Առկա է 2004թ. նոյեմբերի 30-ի թիվ 12 աշխատանքային պայմանագիրը՝ անորոշ ժամկետով և նույն օրով թվագրված թիվ 15 հրամանագիրը:

Ստուգման ակտի նախագծի վերաբերյալ ես առարկություններ եմ ներկայացրել Կենտրոնի ՀՏ և «ԿԱ ՊԵԿ համապատասխան հանձնաժողովին:

Ինձ աշխատանքի ընդունման օրվանից ամեն ամիս հաշվարկվել է աշխատավարձ և ամեն ամիս հաշվարկվել ու վճարվել է պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, ինչպես նաև՝ եկամտահարկ:

Հարկ է նշել, որ ստուգման ակտում նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, ուստի խնդրում եմ այն համարել անվավեր:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության հաշվապահի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ Արմեն Մանոյանը 2004թ. դեկտեմբերի 1-ից «ՍԱՀ» ՍՊԸ-ում աշխատում է որպես հաշվապահ: Մասնավորապես, 2004թ. նոյեմբերի 30-ին ընկերության տնօրենի և Արմեն Մանոյանի միջև կնքվել է թիվ 12 աշխատանքային պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), որի համաձայն գործատուն՝ ի դեմս ընկերության տնօրենի, աշխատանքի է ընդունել Արմեն Մանոյանին որպես

հաշվապահ: Ընդ որում, պայմանագրի 3.1 կետի համաձայն, պայմանագիրը կնքվել է անորոշ ժամկետով և այն անվավեր չի ճանաչվել:

Արձանագրվեց նաև այն փաստը, որ սկսած 2004թ. դեկտեմբեր ամսից Արմեն Մանոյանին հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ, որից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվել և պետական բյուջե են փոխանցվել եկամտահարկի և սոցիալական ապահովության վճարի գծով նախատեսված գումարները:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը՝ հաշվապահ Արմեն Մանոյանի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չլինելու վերաբերյալ, ըստ էության հիմնավոր չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ արկային ծառայության մասին՝ ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Ձեռյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 20.07.2012թ. թիվ 1103119 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ